



## 12. ՏԱՐՉՈՂ ԱԽՉԻԿԸ

Ժամանակով կար չկար՝ մի պառավ կար. դրան ուներ մի ախչիկ. էտ ախչկանը բերուց տղի շորեր հաքցրուց, որ հարսանի տղերանց հետ հաղ անի:

Օրվա մի օրը թաքավորի էրեխտն կորավ, էտ պառավի տղեն քթավ, բերուց տղուց պառավին ասեց.— Նա՛նի ջան, էս քորփա բալին քթել եմ, պահաւ:— Պառավը վե կալավ պահեց:

Թաքավորը ջառչի քցեց թե:— Իմ էրեխտն կորել ա, ով քթել ա՝ բերի, ինչ ուզի՝ կտամ:

Էտ ձենը էկավ ընկավ պառավի հանկար, իմաց արուց թաքավորին, թե էրեխտն իրա կշտին ա: Նաղիրը նի էլավ լյուկիզար դրսրախտ, էկավ պառավի կուշտը, վե կալավ էրեխտն, որ տանի թաքավորին, պառավի տղին էլ հետը գնաց, ծամփին լյուկիզարը ասեց պառավի տղին:— Ախչի՛, թաքավորը որ ասի՛ ուզա՞ տամ, ինձ ուզա, էլ զատ ուզես ոչ:

Գնացին թաքավորի կուշտը, թաքավորը խտրտեց իրա կորած էրեխտին, ետ դառավ պառավի ախչկան ասեց.— Ուզա՞ տամ,

Տղեն ասեց.— Թաքավորն ապրած կենա, ևս քեզանից լյուկիզարն եմ ուզը:

Թաքավորն ասեց.— Իմ թաքավորութունը մի լյուկիզարն էր, որ լյուկիզարս տվի, ախչիկն էլ պըտի տամ քեզ:

Բերուց օխտն օր, սխտը քշեր հարսանիք արուց, ախչիկը տվուց էտ տղին,

Մի ժամանակ որ ապրեցին, թաքավորի ախշիկը տեհավ, որ էտ պառվի տղեն էլ ախշիկ ա, գնաց մորն ասեց.— Ո՛չ դուք ըլեք, ո՛չ ձեր թաքավորութունը, որ ինձ տվիք մի ախշկա, նա՝ ախշիկ, ես՝ ախշիկ, բա ես ի՞նչ անեմ:

Մերը գնաց թաքավորին ասեց թե.— Ախշիկդ ըսենց գանգատվում ա:

Թաքավորն ասեց.— Բա ի՞նչ անենք, ա՞յ կնիկ, թե բերենք զլուխը կտրենք, ըլիլ չե, թե չկտրենք՝ մեր ախշիկն ա մնըմ ողորմելի. իլլաճ չկա, բերենք զրկենք ընենց տեղ, որ փշանա:

Կանչեց փեսին, ասեց.— Որթի', պըտի էթաս լյուկիզարի ախպորը բերեմ:

Ախշիկն էր, վե կացավ, գնաց լյուկիզար ծիու մսրքմը լաց էլավ:

Զին լիզու էլավ, ասեց.— Ախշի, խի՞ ես լալի:

Ասեց.— Թաքավորը ինձ զրկըմ ա, որ էթամ քու ախպորդ բերեմ, ես ո՞նց բերեմ:

Ասեց.— Ախշի, զնա՛ թաքավորիցը մի տկնոր հին գինի ու քիչ էլ բուրթ ուզա. էթանք, ես կրերեմ:

Տղեն գնաց թաքավորիցը գինի ու բուրթ ուզեց, առավ էկավ: Լյուկիզարին դուս քաշեց, նի էլավ, քշեց:

Գնաց հասավ մի ծովի դրադ:

Լյուկիզարն ասեց.— Ախշի, վեր արի, էտ ախպորի ջուրը դարդակա՛, բուրթը խրա իրա ակը, գինին ածա հավուզը, դու տափի կաց: Իմ ախպէրը ծովից դուս կգա, էտ գինին կխմի՝ կհարփի, էն ժամանակը դու դուս կգաս, կթոշես վրին, ինքը կտանի քեզ դըբա ծովը, դու կանես՝ օթիրդ կանշըմ ա՛, հրե՛նա, նա իմ եննուցը կգա:

Տղեն զնաց բուրթը կոխեց հախպորի ակը, գինին լքցրուց հախպորի հավուզը, ինքը տափի կացավ: Սովեղեն ձին դուս էկավ. ֆոտֆոտաց, ետ գինին խմեց՝ հարփեց, տղեն դուս էկավ, թոավ քամակը, Զին վաղեց դըբա ծովը, տղեն ասեց. օթուրիկդ կանշըմ ա, հրե՛ն, հրե՛նա: Լյուկիզարն էլ առաջին հաղըմ էր: Զին ետ դառավ դըբա լյուկիզարը, միացան, իրար հետ էկան:

Տղեն րերուց ձին տվուց թաքավորին:

Թաքավորի ախշիկը եփ տեհավ տղին, էլեդ բարկացավ հոր վրին, ասեց.— Ո՛չ դու ըլես, ո՛չ քու թաքավորութունդ, ինձ աղատա՛ էս ախշկանից:

Թաքավորը հ'էքսի օրը կանչեց իրա ֆառաշին<sup>1</sup>, ասեց.— Ի՞նչ  
անենք որ սրան փլացնենք. գնաց, էլի էկավ:

Ասեց.— Թաքավոր, բեր ղրկենք Դևստում, մեր օխտը տարվա  
խարջը մնըմ ա՝ թող էթա բերի, Դևերի ձեռիցը պրծնիլ լի:

Թաքավորը կանչեց էտ տղին, ասեց.— Ոըթի՛, գնա Դևստում,  
օխտը տարվա խարջը մնըմ ա, վե կալ բեր:

Ախշիկը էլեդ գնաց Լյուլիզարի մսուրքը՝ լաց էլավ, ասեց.—  
Լյուլիզար, իմը՝ դու, քոնը՝ աստված, թաքավորը ինձ ըսենց ա  
ասել:

Լյուլիզարն ասեց.— Մի՛ վախիլ, կէթանք կրերենք:

Տղեն նի էլավ ձին, ընկավ ճամփա, գնաց հասավ Դևստում:  
Դրանք մի մառմար քար ունեին, ձին ասեց.— Ախշիկ ջան, իմ պոլը  
կապա էս քարիցը՝ ես քաշ կտամ, դու մտի նեքսև՝ խարջը վե կալ  
բեր:

Տղեն ձիու պոլը կապեց մառմար քարից, ձին սկսեց քաշ տալ,  
թողը բանցրացավ. տղեն մտավ նեքսև, տեսավ քառասում դև նըս-  
տած են, Դևերն ասեցին.— Ըհը՛, մեզ կերակուր ա էկել:

Տղեն ասեց.— Ա՛յ տնաշեններ, ըստի արխեին նստել եք, հրեն  
թաքավորն էկավ ձեր խարջի դեմը տարավ ձեր մառմար քարը. ես  
էկա ձեզ իմացընեմ:

Դևերը դուս թափեցին: Տղեն թամաշ արուց, տեհավ օխտը տար-  
վա խարջը սանիցը կախ տված էր, վե կալավ ու փախավ. էկավ ձին  
նի էլավ, պոլը մառմար քարից կտրեց, հավալամիշ էլավ: Թուավ  
գնաց թաքավորի դուսնը վեր էկավ:

Տղեն տարավ օխտը տարվա խարջը տվուց թաքավորին:

Թաքավորի ախշիկը էլեդ բարկացավ, կպավ հոր յախեն.— Դու  
իմ՝ լես էս տղին փշացնըմ:

Թաքավորը կանչեց նազրին, ասեց.— Դևստընից էլ ետ էկավ,  
բա հըմի ի՞նչ անենք:

Նազիրն ասեց.— Թաքա՛վոր, քու պապին մի տերողորմյա  
ուներ, դևերը տարել են, հրեն նրանց մոր ձեռին ա, ղրկենք, բերի:  
Հնար չկա, որ ըտեղ էթացողը ետ գա:

Թաքավորը կանչեց փեսին, ասեց.— Փեսա՛, գնա մեր պապի  
տերողորմյան՝ այսինչ դմի մոր ձեռին ա, վե կալ բեր:

<sup>1</sup> Սառային, (ծանոք. բանահավամի): Խշանակում է նաև դահին, (ծանոք.  
կազմողի):

Տղեն էլեղ գնաց ձիու մսուրքը, լաց էլավ,

Զին ասեց.—Հօ, ախշի, խի՞ ես լալի:

Ասեց.—Ի՞նչ անեմ, դրկըմ ատերողորմին, ես ո՞նց բերեմ դե-  
վերի մոր ձեռիցը:

Ասեց.—Ախշի՛, աստված մենձ ա, մտածիլ մի, կէթանք կբե-  
րենք:

Տղեն նի էլավ ձին, գնացին: Գնացին հասան դեմ տունը:

Տունը շինած էր մի բանցր դըքի գլխին, ձորի բերնին: Զին  
ասեց ախշկան.—Ախշի, որ էթաս մննես դեմ տունը, կտենաս դեմ  
մերը սան կշտին պառկած ա, տերողորմեն սանից կախ տված էթըմ  
ա, գալի: Սհաթը որ թամամըմ ա, տերողորմեն ընկնըմ ա դեմ մոր  
բոր մեշը. մտիկ կտաս, եփոր բոր մեշտեղն ընկնի՝ վեկոնես, ու  
քեզ քարափիցը կբցես, ես տակը քու ճամփեն կպահեմ:

Տղեն գնաց մտավ տուն, սան տալտըմը տափ կացավ. տեհավ  
տերողորմեն ընկավ դեմ մոր բոր մեշտեղը, հենց վրա ընկավ, վե  
կալավ ու իրան քցեց քարափովը. ձին բանցրացել էր, ընենց որ  
տղեն ընկավ թամքի մեշը: Զին թռավ, դեմ մերը վե կացավ, տեհավ  
տղեն տանըմ ա, բարկացավ, սաեց.—Ի՞նչ ասեմ, էլ անեծք չունեմ,  
թե տղա ես՝ ախշիկ դառնաս, թե ախշիկ ես՝ տղա դառնաս:

Էն սհաթը պառավի ախշիկը դառավ տղա: Տարավ տերողորմեն  
տվուց թաքավորին, վազեց գնաց ախշկա կուշտը: Էս դոնըմ ախշիկը  
գնաց թաքավորի կուշտը, ասեց.—Իմը սա ա, ըսենց տղա լի՛լիւ:

Թաքավորը մի քաղաք բաշխեց իրա ախշկանն ու փեսին,  
սաեց.—Գնացեք, ձեզ հըմար թաքավորութուն արեք:

Տղեն գնաց իրա պառավ մորն էլ քերուց իրա կուշտը, կերան,  
խմեցին քեֆ արին:

Աստվածանից հ'իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝  
լսողին, մինն էլ՝ հ'անգազ գնողին:

